ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2975 - Ա **20 ապրիլի 2009թ.**

Ն. ՉԱՐԲԱԽԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ Հ. 64 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԻՄԱ ԳԻՆՈՍԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ԳԱՌՆԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՄԱՐԻՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռիմա Գինոսի Ամիրխանյանի (ծնված 00.00.1931թ.), Գառնիկ Արտավազդի Ամիրխանյանի (ծնված 02.08.1962թ.), Սարգիս Արտավազդի Ամիրխանյանի (ծնված 12.04.1968թ.), Մարինա Արտավազդի Ամիրխանյանի (ծնված 07.04.1960թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ն. Չարբախի 1-ին փողոցի հ.64 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 670.40քմ, որից 528քմ մակերեսով հողամասը Ռիմա Գինոսի Ամիրխանյանին, Գառնիկ Արտավազդի Ամիրխանյանին, Սարգիս Արտավազդի Ամիրխանյանին, Մարինա Արտավազդի Ամիրխանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 142.4քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 30.05.2007թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, 30.05.2007թ. սեփականության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման հ.1/602, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/233 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.04.2009թ. հ.20ել-3083 եզրակացությունը, համաձայն որի Ն. Չարբախի 1-ին փողոցի հ.64 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ն. Չարբախի 1-ին փողոցի հ.64 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռիմա Գինոսի Ամիրխանյանի, Գառնիկ Արտավազդի Ամիրխանյանի,

Սարգիս Արտավազդի Ամիրխանյանի, Մարինա Արտավազդի Ամիրխանյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 528քմ մակերեսով հողամասին կից 142.4քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 142.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Ն. Չարբախի 1-ին փողոցի հ.64 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Ն. Չարբախի 1-ին փողոցի հ.64 տուն>>։

5.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռիմա Գինոսի Ամիրխանյանի, Գառնիկ Արտավազդի Ամիրխանյանի, Սարգիս Արտավազդի Ամիրխանյանի, Մարինա Արտավազդի Ամիրխանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ